

ընեմ. ես միշտ կ'անապարեմ եւ կը ջանամ  
 Հոռոմ ժամանել. սակայն սատանան շարու-  
 նակ քշնամական, աղիտարեր քակարդներ  
 կը լարէ իմ դէմս: Քայց ես կը յուսամ Աս-  
 տուծմէ՝ թէ անոր գլուխը պիտի ջախջախեմ  
 եւ Հոռոմ պիտի հասնիմ: Նաեւ գիտցի՛ր, ո՛վ  
 հոգեւոր գաւակս, թէ այս ձմեռ պիտի մնամ  
 հոս, Կ. Պոլիս. գարնան պիտի երթամ ըԶ-  
 միւռնիա, պարտօքրուս համար: Հոն, Տէր  
 Աստուած մեզ առաջնորդէ այն բանին, որուն  
 ինք կը հանի: Ո՛վ սիրելի որդեակ, դուն լաւ  
 գիտես՝ թէ ինչպէս *տասնրեօթ տարի առաջ  
 ես ա՛յնչափ նուէրներ պատրաստած էի եւ  
 մինչեւ Զմիւռնիա բերած էի, որպէսզի նա-  
 լով դէպի Հոռոմ ճամբորդէի, եւ թէ ինչպէս  
 այն ժամանակ արգելքի հանդիպած էի,  
 եղիազարի հերձուածին հետեւանքով.* եւ  
 այս պատճառաւ յայնժամ հինգ տարի այս  
 մեծ ֆաղափին մէջ մնացի եւ երկու տարի ալ  
 Ադրիանուպոլիս եւ ուրիշ տեղեր շրջեցայ,  
 մինչեւ որ ձեռք բերի ինչ որ պէտք էր այդ  
 խնդրին կարգադրութեան համար: Ահա թէ  
 ինչո՛ւ այդ պատրաստուած նուէրները, ո-  
 րոնք 700 բուման կամ 11.000 սկուդ կ'ար-  
 ժէին, այս ֆաղափը բերած եւ ծախսած էի:  
 Եւ ապա այդ հերձուածը նուանելէ ետք,  
 վերադարձած էի մեր Սուրբ Աթոռը, եւ մեր  
 պաշտօնեաներէն իւրաքանչիւրը իր պաշտօ-  
 նին գլուխը դրած էի: Ապա Հոռոմ պիտի մեկ-  
 կէի ուրիշ յարմար նուէրներով: Սակայն,  
 ինչպէս քեզի ծանօթ է, նաեւ այդ անգամ  
 արգելի բախսած էի երեսնի խանին կամ